

324

ՀԱԻՅ ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՁ.

ԱՇԽ. Ս. ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 21

Խմբ. Մ. Զատաֆյանի յեզ Ս. Արարատյանի

Շ Ե Ր Ա Մ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Յ Ե Ի Ե Վ ա Ե—1927

638

Ե-51

0 1 OCT 2010

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԳՊՐՈՑԻ ԳՐԱԳԱՐԱՆ

№ 21 «ԲԵՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 21

Խմբ. Մ. Զատափյանի լեզվ. Ա. Արարատյանի

638. <sup>ԿԻ</sup>  
Ծ-51

1003  
11095

Ձ Ե Ր Ա Մ

==

ՀԱՅԿԱՆ ԶԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ  
ՀԱՅ.ՍՍՀ ԵՅՈՒՆՎԱԿԱՅԱ ԲԻՅՈՒԿԱԿԱՆ  
7/21-1022  
ՎԵՆԱ, ՊՐԱԿՏԻԿԱ  
ՔԱՆՈՒՆ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՌԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ ա 6 - 1 9 2 7

13 JUL 2013

22.979



## 1. ՍԵՐՄԻ ԲԱՑ ԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Սերմի բաց անելու ժամանակը կախված է թթենիների տերևների բացվելուց: Ուրեմն, նախած տեղին և կլիմային, այդ կարող է տեղի ունենալ ուշ կամ շուտ: Համենայն դեպս շերամի վորդ պահողը պետք է լավ նախատեսանի, թե մոտավորապես չերբ պիտի բացվեն թթենիները, վորպեսզի ըստ այնմ գարթնեցնի սերսերը և ժամանակին կարողանա նրանց կերակուր հասցնել: Ուշ բաց անելն ել իր վնասն ունի: Թթենու տերևներն արդեն կոշտացած են լինում և թրթուռների համար բոլորովին անմարս, վորից նրանք կարող են շատ շուտ հիվանդանալ:

Մեր չերկրում առհասարակ սերմը բաց անելու ժամանակը տեղ կա, վոր կարող է սկսվել մարտի վերջերից և տևում է մինչև մայիսի 15-ը: սար տեղերում ավելի ուշ է սկսվում, քան դաշտային տեղերում և հովիտներում:

Գրառեպվար № 341 ք. Հ. 616 Տիրած 6.000

Պետհրատի չերկրորդ տպարան Յերևանում—943

Աերմի բաց անելու նախապատրաստութիւնները պետք է տեսնել թթենիների բացվելուց գոնէ հինգ ուր առաջ: Մինչև զարուճ սերմը պետք է պահել հով տեղ և ազա տեղափոխել մի փոքրիկ, տաք սենյակ, ամեն ուր տաքացնելով նրա շերմաստիճանը, մի մի աստիճան բարձրացնելով հասցնել մինչև 16<sup>0</sup> Ռեմյուրի շերմաշափով: Այդ շերմութիւնը պետք է պահել մինչև թրթուռների ձվից դուրս գալը:

Հենց վոր այդ նշանները չերևցին, սենյակի շերմութիւնը պետք է չերկու աստիճան ևս բարձրացնել և այդ վիճակում պահել չերեքշորս ուր, մինչև վոր բոլոր սերմերը կը բացվեն:

Սերմանոցի շերմութիւնը 20<sup>0</sup>-ից ավելի չը պետք է լինի, վորովհետև ձվիկները կարող են խաշվել:

Յեթե սչնպես պատահի, վոր նախապատրաստութիւն չըջանում հանկարծ անսպասելի կերպով սկսի ցրտեր անել, այն ժամանակ սենյակի շերմութիւն աստիճանը չը պետք է բարձրացնել, այլ թողնել միևնույն աստիճանի վրա, մինչև վոր չեղանակները լափանան:

Մեզանում պարափները շերամի սերմը բաց անելու համար վերցնում են, գնում ծոցները, վորպեսզի իրենց մարմնի շերմութիւն շնորհիվ

դուրս գան ձվիկներից: Իհարկէ, այդ միջոցը շատ անթուլլատրելի և վայրենի միջոց է:


Արհեստական միջոցներով սերմ բաց անելու համար կան հատուկ գործիքներ, վորոնք կոչվում են ինկուպատորներ: Ինկուպատոր բառացի նշանակում է թխսարան: Նույնպիսի գործիքներով թուխս են գնում նաև թուչունների ձվերը, իհարկէ, վերջիններս անհամեմատ ավելի խոշոր են:

## 2. ՎՈՐԴԸ ԿԱՍ ԹՐԹՈՒՈՒԸ

Շերամի վորզը ձվից դուրս գալիս մոտավորապես 3 միլիմետր չերկարութիւն է ունենում և կես հազարերորդ գրամմ ծանրութիւն: Գլուխը սև է և փայլուն, մեջքն ու վորը ծածկված են գորշ ու ցից-ցից մազերով:

Փոքրիկ վորզը լույս աշխարհ դալուն պես իսկույն ընկնում է տերևի վրա, կրծում է նրա փափուկ մասերը և որեցոր մեծանում: Ռեմյուրի 17<sup>0</sup> - 18<sup>0</sup> շերմութիւն մեջ պահվող վորզի ախորժակը հինգերորդ ուրը կապվում է, շարժվածքը դանդաղում, գլուխն ուռչում, կաշին բաց շագանակագուն է դառնում ու փայլում: Նա վերջապես դադարում է ուտելուց և գլուխը վեր տընկած 24 ժամ թմրում է ու բնում: Ապա զարթ-

նելով՝ խորխը—մորթը փոխում է և կրկին սկը-  
սում տերև ուտել: Նրա ձվից դուրս գալուց



Շ ե ռ ա մ

մինչև բնից զարթնելը կամ առաջին մորթափո-  
խութունը տևում է 5—6 որ կամ ավելի, յեթե  
յեղանակը ցուրտ է: Սա կազմում է նրա կյան-  
քի առաջին շրջանը կամ առաջին քունը:

Առաջին քնից զարթնելիս վորդի գլուխը  
փոքր ինչ լայնանում է, մազերը կարճանում,  
կաշին կնճռոտում և պզտոր գույն է ստանում:  
Նա առաջվա պես շարունակում է կրծել տերև-  
ները, սկզբում քիչ-քիչ, բայց հետզհետե ավելի  
ազահարար. իսկ շորքորդ որը զարձյալ ախոր-  
ժակը կապվում է: Նա 24 ժամ քնում է և յերկ-  
րորդ անգամ մորթը փոխում: Սա կոչվում է յերկ-  
րորդ շրջան կամ յերկրորդ քուն, վորը տևում է  
4—5 որ:

Այնուհետև գալիս է յերրորդ շրջան կամ  
յերրորդ քունը: Այս շրջանում վորդի մարմինը  
յերկու անգամ ավելի յերկարացած է լինում,  
բամ յերկրորդ շրջանում: Յերրորդ որվանից նը-  
րա ախորժակը սաստիկ բացվում է, քնում է  
վեցերորդ որը, 24 ժամից հետո զարթնում է և  
մորթը փոխում: Յերրորդ քունը տևում է 6—7 որ:

Յերրորդ մորթափոխութունից հետո վորդը  
մտնում է իր յորրորդ շրջանը, վոր տևում 6—7  
որ: Այժմ նա 25—30 հազարերորդ մետր յերկս-  
րութուն ունի, ավելի աշխույժ է, ուտում է ա-  
վելի ազահարար, վեցերորդ որում ախորժակը  
փակվում է և մտնում է մեծ քունը, վոր տևում  
36—42 ժամ և առաջվա կարգով մորթը փոխում:

Մեծ քնից զարթնելով՝ մտնում է իր յին-  
գերորդ շրջանը, վոր տևում է 8—10 որ: Այդ

ըըջանում նա համնում ե կատարյալ մեծության  
և գեղեցկության: Նրա չերկարությունը 5 սան-  
տիմետրից ավելի չե, իսկ ծանրությունը մոտ մի  
մսխալ: Վորդի թաթիկների գունից կարելի չե  
վաղորոք իմանալ, թե նա ինչ գունի բոժոժ պի-  
տի շինի: չեթե թաթիկները գեղին են՝ գեղին,  
չեթե սպիտակ են՝ սպիտակ:

### 3. ԲՈՒՌԺ ԾԻՆԵԼԸ

Հինգերորդ ըըջանի սկզբին վորդը չորս ան-  
գամ ավելի չե ուտում, քան իր բոլոր ըըջաննե-  
րում կերածները միասին: Նա աջնպես ագահա-  
բար հարձակվում ե տերևի վրա և խշփշալով ու-  
տում, վոր կարծես աշխարհը, չեթե տերև դառ-  
նալու լինի, դարձյալ հերիք չպիտի անի նրան:  
Բայց չերկար չի բաշում, 8—9 որից հետո ախոր-  
ժակը փակվում ե, դադարում ե ուտելուց և մի  
տեսակ հոգսի մեջ ե ընկնում: Թափառում ե դես  
ու դեն, գլուխը բարձրացնում ե աջ ու ձախ և  
հարմար անկյուն վորոնում բոժոժ շինելու հա-  
մար: Գտալ թե չե, հետին վտտները դիմհար ե  
ե տալիս մի բանի, գլուխը մոտեցնում այս ու  
այն ծեղին, տերևին, փայտին, մի խոսքով ինչ վոր  
պատահում ե և բերանից շողինք դուրս տալով՝  
կպցնում ե նրանց և վոստայն կազմում:

Այդ շողինքը մի հեղուկ նյութ ե, վոր դու-  
լացել ե կերած տերևներից՝ նրա թելատուն կոչ-  
ված պարկի մեջ, և վորն այժմ բերանից թա-  
փում ե: Այդ հեղուկն ողի ներգործության տակ  
պնդանում և թելանում ե:

Վոստայնը ձգելուց հետո վորդը բաշվում ե  
նրա մեջ և գլուխն ութածև սատանելով՝ բոժոժ ե  
շինում:

Առաջին որը վեց ժամվա ընթացքում աջն-  
բան թել ե փաթաթում իր շուրջը, վոր հագիվ ին-  
քը 1 շմարվում ե: Յերկրորդ որը բուրբուրովին փակ-  
վում ե իր մութ անակում, բայց ներսը կուչ չե-  
կած աշխատում ե 1—2 որ ևս, անակի պատե-  
րը լավ ամրացնում ե, մինչև վոր վերջանում ե  
թելատան հեղուկը, նրա հետ ել վերջանում  
ե իր կյանքի հինգերորդ ըըջանը, մի նոր կերպա-  
րանափոխություն ստանալու համար:

Յեթե ձեր ըըջանում կան թթենիներ, վոչ  
մի դժվարություն չկա նրանց շատ փոքր քանա-  
կությամբ սենյակում պահելը: Կերակրեցեք և ու-  
շաղբությամբ հետևեցեք, թե ինչպես են նրանք  
մաշկափոխության չենթարկվում: Յերբ են սկը-  
սում բոժոժ պատրաստել:

#### 4. ՎՈՐԳԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Վորդերի կյանքը, ի չպես տեսանք, ձվից դուրս գալուց մինչև բոժոժ դառնալը, հինգ շըրջան ունի և չորս անգամ մորթափոխություն կամ քուն: Մորթափոխության ժամանակ վորդերին անհանգիստ չպետք է անել, իսկ զարթնելուց հետո մինչև մյուս քունը պետք է կանոնավոր կերակրել և չերբեմն տակները մաքրել: Պետք է աշխատել, վոր միևնույն փոռցի կամ սախափ վրա գանված վորդերը յիստամանակ քնեն և միասին գործեն, չեթե վոչ քուն մտածներն առաջ կընկնեն, իսկ հետամնացները տերևի տակ մնալով՝ մեծ մասամբ կփչանան, մանավանդ փոքրը հասակում, չերբ անգոր են տերևի չերեսը բարձրանալ:

Վորպեսզի այդ անհարմարությունը չլինի, հարկավոր է հետևյալ գզուշությունները գործադրել:

1. Սերմից դուրս չեկած սմեն ժապակ կամ որվա վորդերին առանձին տեղ տալ և չխառնել մյուս որը դուրս չեկածները հետ:

2. Սմեն քնելուց դեռ արթուն ու յետ մընացածներին հեռացնել միջից: Այդպես պետք է

անել նաև, չերբ մեծամասնությունն արթնացել է, իսկ փոքրամասնությունը դեռ քնած է:

3. Միորինակ շերտություն պահպանել և աշխատել վորչափ կարելի չե, կերակուրը հավասար բաժանել, վոր պեսզի շատ ուտողներն իրենց ընկերներից առաջ չանցնեն զարգացմամբ:

4. Մինչև առաջին չերկու շըջանը կտրատած տերև տալ կամ փոքրիկ նուրբ տերևներ, վոր ավելի ախորժակով են ուտում վորդերը և նոր կերակուր չտալ մինչև տակինը անպետքանա, վորպեսզի վորդերը տակից դուրս գան:

5. Քնից արթնացած վորդերին պետք է այն ժամանակ կերակւր տալ, չերբ մեծ մասն արթնացել է արդեն և իսկույն փոխադրել ուրիշ տեղ վորպեսզի յետամնացների հետ չմնան և անհավասարություն չստեղծվի:

6. Յեթե ուզուս եք յետ մնացածներն առաջիններին հասնեն և նրանց հետ զուգնթաց գընան, պետք է յետամնացներին ավելի տաք տեղ, տեղավորեք և որվա մեջ մի կամ չերկու անգամ կերակւր մյուսներից ավելի տաք:

7. Վորդերը պետք է մեկ-մեկուց հետու լինեն, վորպեսզի կարողանան ազատ շարժվել, ուտել, շնչել և հանգիստ քնել:

Ինկատի ունենալով վորդերի արագ մեծանալը՝ նրանց տեղ պետք է հեռոցհեռ ընդարձա-

կել: Առհասարակ ընդունված է 1 մսխալ սերմից  
 դուրս չեկած վորդերին հատկացնել:

Ա.	չրջանում . . . . .	$\frac{1}{2}$ —1	բառ.	արշ.
Բ.	» . . . . .	1—2	»	»
Գ.	» . . . . .	2—4	»	»
Դ.	» . . . . .	4—8	»	»
Ե.	» . . . . .	8—14	»	»

Վորդերի տեղն ընդարձակելու համար մի  
 քանի յեղանակ կա. 1) սերմից դուրս չեկածնե-  
 րը վերցնել և հեռու-հեռու դնել զանազան փր-  
 ոսցների վրա, 2) ծակոտկեն ստվարաթղթերի  
 միջոցով, վոր թե տեղ ընդարձակելը և թե տա-  
 կի աղբը մաքրելը կդուրանա:

8. Վորդերին պետք է կերակրել առաջին  
 յերկու շրջաններում որական 4—6 անգամ, իսկ  
 յերկրորդ քնից հետո 3—4 անգամ մինչև ցախ  
 բարձրանալը: Կերակուրը պետք է տալ առա-  
 վոտյան ժամը 5-ին, 10-ին իսկ կեսօրից հետո՝  
 3-ին և 8-ին: Մի մսխալ սերմից դուրս չեկած  
 վորդերին՝ վորոնց քանակը մոտավորապես 6000  
 կլինի, կերակրելու համար պետք է մաքուր, թարմ  
 տերևներ տալ:

Ա.	չրջանում . . . . .	2	Փունտ.
Բ.	» . . . . .	5	»
Գ.	» . . . . .	15	»
Դ.	» . . . . .	1	փութ 15
Ե.	» . . . . .	6	» —

---

Ընդամենը . . . 7 փութ 37 փունտ

1. Վերև հիշված թվերի համաձայն գտեք,  
 թե վորքան տեղ պետք է հատկացնել 2, 3, 4,  
 5 և այլ մսխալ սերմից դուրս չեկած վորդերի  
 համար զանազան շրջաններում:

2. Նույն ձևով, թե վորքան կերակուր պետք  
 կլինի 2, 3, 4, 5 և այլ մսխալ սերմից դուրս  
 չեկած վորդերին՝ զանազան շրջաններում:

### 5. ՎՈՐԴԱՆՈՑ ԿԱՍ ԾԵՐԱՄԱՏՈՒՆ

Առաջին բանը, վորի վրա պետք է ուշադ-  
 րութուն դարձնի շերամապահությամբ պարա-  
 պողը, այն պիտի լինի, թե նա ինչքան սերմ կա-  
 րող է պահել: Սերմ պահելու քանակությունը  
 կախված է վորզանոցի կամ շերամատան մեծու-  
 թյունից և թթենիների տնկարանից:

Պետք է գիտենալ, վոր ամեն մի մսխալ  
 սերմից դուրս է գալիս մոտավորապես 4—6  
 հազար վորդ: Այդքան վորդ պահելու համար վեր-  
 ջին շրջանում հարկավոր կլինի 12—15 խորա-  
 նարդ արշին տարածություն: Այդքան վորդ կե-  
 րակրելու համար պետք է ունենալ 7—9 փութ  
 տերև: Բարեհաջող պայմաններում 1 մսխալ սեր-  
 մից կարելի չէ ստանալ 15—25 փունտ բոժոժ:

Այս նախադիտելիքներից հետո այժմ տես-  
 նենք, թե ինչպիսի վորդանոց պետք է շինել:



Նախ և առաջ վորդանոցը պետք է շինե թթենիների այգուժ կամ նրան շատ մոտիկ, վոր պեսսգի առանց դժվարության հարկավոր ժամանակ կերակուր կարողանաք հասցնել:

Վորդանոցի դիրքը պիտի լինի չոր և բացթյա տեղ, հնու գոմանոցից, աղբանոցից և կանգնած ջրերից: Նրա պատերը պիտի նայեն արևելք և արևմուտք, վորպեսզի արևի ջերմությունը հավասարապես տաքացնի ներսը:

Ամենահարմարն այն շինությունն է, վորտեղ կարելի յե ցրտի և տաքի առաջն առնել և միորինակ ջերմություն պահել:

Վորդանոցը պիտի ունենա յերկու յերեսից բավականաչափ պատուհաններ՝ լուսի և ողափոխության համար: Պատերում պետք է ունենալ մի քանի վառարաններ՝ հարկս վոր ժամանակ վորդանոցը տաքացնելու համար և առատադից մի յերկու բացվածիներ՝ ներսի հավաքած գոլորշիները դուրս գնալու համար:

Առհասարակ լավ են այն վորդանոցները, վորոնք շինված են ներքնատան վրա, վորտեղից կարելի յե հարկը պահանջած ժամանակ ցուրտ ող ստանալ:

Կովկասյան վորդանոցները մեծ մասամբ յեղեգնից են լինում՝ 8 - 20 արշին յերկարությամբ, 4 - 6 արշին լայնությամբ, առանց ձեփի, ամեն

կողմից ծակեր ունեն և հարկավոր ժամանակ չեն կարող տաքացնել կամ տաքության առաջն առնել:

Ուրիշ յերկիրներում մեծ մասամբ վորդանոցները յերկհարկանի յեն շինում և մի քանի բաժանմունքներով. 1) տերեվանոց, վոր մի փոքրիկ սենյակ է մաքուր հատակով. վորտեղ պահում են քաղած տերեւները, 2) սերմանոց, վորտեղ սերվը բաց են անում և պահում են մինչև յերբորդ շրջանը, 3) ըուն վորդանոց, վորտեղ վորդերին ինամատարություն են անում յերբորդ շրջանից սկսած և վերջապես 4) ներքնատուն, վորտեղ գանազան գործիքներ են պահում և նրա մեջ ամբարած ցուրտ ողն ոգտագործում:

Տերեւանոցն ու ներքնատունը վարի հարկում են, իսկ սերմանոցն ու վորդանոցը՝ վերի:

Մեղանում յեթե դժվար կլինի այդ բոլոր հարմարություններն ունենալ, գոնե պետք է աշխատել, վոր վորդանոցը մաքուր լինի, ծակուծուկ չունենա և նրա կից տերեւանոցը գով լինի:

Անձրև և խոնավ յեղանակներին պետք է վորդանոցը պինդ փակել. ներսը կրակ վառել, բայց դուռն ու պատուհանները հաճախ բաց ու խուփ անել:

Այն շերամապահները, վորոնք հարմար տեղ չունեն սերմ բաց անելու համար, շինում են

սերմնաձան պահարաններ, վոր դժվար բան չե: Պահարանը փայտից ե, ապակե դռնակներով, ներսում մի քանի գարակներ, վորոնց վրա շարում են սերմի արդիկները կամ ամանները, մի յերկու տեղից ծակեր են թողնում ողսափոխության համար: Պահարանի ներքևում դնում են մի ճրագ, վորոշ ջերմություն հաղորդելու համար: Իսկ ջերմության աստիճանն իմանալու համար հրա մեջ ամրացնում են մի ջերմաչափ: Կողքին լավ ե պահել մի գավաթ ջուր, վորպես զի ողջ շատ չչորանա պահարանի մեջ:

Մեզանում մի վատ սովորություն կա, վոր սերմը կապում են կտավի մեջ և դնում ձոցները, վորպեսզի մարմնի ջերմությամբ արագացնեն նրա բացվելը:

## 6. ԹԹԵՆԻՆ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՐԵՎԸ

Շերամապահության մեջ մեծ դեր ե խաղում թթենին և պետք ե լուրջ ուշադրություն դարձնել նրա վրա, վորովհետև նրանից ե կախված գլխավորապես գործի հաջողությունը:

Թթենիներն առհասարակ բաժանվում են յերկու կարգի՝ սև և սպիտակ, վորոնք ճանաչվում են իրենց պտուղներից: Շերամի վորդի համար մշակում են սպիտակ թթենին, վորի տերևները

թե շատ են և թե քնքուշ, մինչդեռ սեխը — կոշտ են և նրանցով կերակրված վորդը լավ տեսակի մետաքս չի տալիս:

Սպիտակ թթենիներն ել իրենց հերթին բաժանվում են յերկու տեսակի՝ վայրի և շահ: Մեզանում և Կովկասում մշակում են վայրի թթենիներ, բայց Ֆրանսիայում շահ թթենիներ են մշակում, վոր մի քանի առավելություններ ունի: Նախ՝ շահ թթենիներն ավելի շատ են տերևներ տալիս, ճյուղերը հարթ են, վորոնք հեշտացնում են տերևաքաղը ե ժամանակի կորուստ չի լինում. տերևը կակուղ ե, խոշոր և պարարտ, վոր կարող ե յերկար դիմանալ, մանավանդ անձրևային յեղանակներին, յերբ ստիպված են լինում մի առ ժամանակ պաշար ունենալ և թրջված տերև չուտեցնել:

Սակայն գիտնականների գանազան վորձերը ցույց են տվել, վոր վայրի թթենիների տերևներով մեծացած վորդերն անհամեմատ ավելի ընաիր և քանակությամբ ել շատ մետաքս են տալիս, քան շահի տերևներով մեծացածները: Որինակ, մի իտալացի գիտնական վորձել ե, վոր 18<sup>1</sup>/<sub>2</sub> ֆունտ վայրի թթենու տերևով կերակրած վորդերից ստացել ե 21 մսխալ բոժոժ, այն ինչ նույնքան բոժոժ ստանալու համար շահ թթենու տերև գործադրել ե 24<sup>3</sup>/<sub>4</sub> ֆունտ: Վայրի թթենու

1003  
56011

տերևով մեծացրած վորդերից ստացել է  $9\frac{1}{2}$  Ֆ. բոժոժ, վորը տվել է 100 մսխալ մետաքս, այն ինչ նույնքան բոժոժը շահ թթենու տերևներով մեծացրած վորդերից ստացվել է 88 մսխալ մետաքս:

Տերեվաքաղը կամ տերև հավաքելը պիտի կատարել առավոտյան այն ժամանակ, չերբ արևն արդեն ընկել է տերևների վրա և ցածաքացրել առավոտյան ցողը, իսկ չերեկոյան՝ արևի մայր մտնելուց առաջ, քանի հով չի ընկել:

Քաղի համար պետք է բանեցնել սուր ցաքհատ կամ հոտոց՝ շիվերը կտրատելու համար: Քաղած տերևը թափում են քսակի կամ դամբյուղի մեջ և տանում վորդանոց, չեթե մոտ է: Իսկ չեթե հեռու չե, փաթաթում են կտավի մեջ կամ քթոցների մեջ և սալով կամ շալակով տեղափոխում:

Վորդերի համար ավելի ընտիր տերևները չերկու տարի չկտրած ծառի տերևներն են, չեթե անկարանն այնքան ընդարձակ է, վոր մի տարի մի մասն են կտրում, մյուս տարին՝ մյուսը:

Տերևը վորդանոց փոխադրելուց հետո, պետք է բարակ շերտով փռել, չեղանով քամու տալ շուտ-շուտ, վորպեսզի չչորանա և չղեղնի: Յեթե թրջված է անձրևից, պետք է հաճախ խառնել, իսկ չեթե շուտ կերակրելն անհրաժեշտ է,

պետք է առանձին չորացնել: Յեթե տերևը տուն հասցնելիս տաքացել է, պետք է քիչ ջուր շող տալ վրան, վորպեսզի թարմանա: Տերևանոցը պետք է լույս լինի, վորպեսզի տերևները չղեղնեն, բայց միևնույն ժամանակ արև չպետք է ընկնի ներսը: Յեթե տերևը նիհար է ու մանր, կարելի չե քաղից անմիջապես հետո ուտեցնել, իսկ չեթե փափուկ է ու ջրոտ, գոնե մի քանի ժամ պետք է մնա, տմկի և ապա տրվի վորդերին:

Տերևները պետք է ջուրը նրանց մաքրությունն անհրաժեշտ է. դեղնած, թառամած և կեղտոտ տերևները չպետք է տալ վորդերին:

1. Յեթե ձեզ մոտ կան գանազան տեսակ թթենիներ, վորձեցեք նրանց տերևներով կերակրել առանձին խումբ-խումբ վորդերի և դիտեցեք նրանց զարյացման տարբերությունը:

2. Ինչու խոնավ տերևներն էրար վրա դարսելիս տաքանում են:

## 7. ԸԱՍ ԴՆԵԼԸ ՅԵՎ ԲՈՒՈՒԱԿԱԼԸ

Շախ գնելը սկսում են վորդերի չորրորդ քնից մի ութն որ անցած: Կանեփի, շողգամի կամ ավելի յերկայն տրցակներ կամ կապուկներ բերում են և տախտերի յերկարությամբ մի մի

արշին հեռավորութեան վրա շարում: Յախերը  
դնելու ժամանակ այնպես պիտի հարմարեցնել,  
վոր վորդերին կարելի կլինի մի չերկու որ ևս  
կերակրել առանց նեղութեան:

Վորդերի շախ բարձրացած ժամանակ վոր-  
դանոցի տաքութիւնը պիտի լինի 18—20, մին-  
չև վոր բոլոր վորդերը բոժոժ շինեն, վերջաց-  
նեն: Տուրտ ողը կաւոյ ե թմրեցնել, մինչև ան-  
գամ կանգնեցնել բոժոժ շինելը, իսկ շոգն արա-  
գացնում ե և ավելի մեծ, բայց թույլ բոժոժներ  
են ստացվում: Բոժոժ շինելու ժամանակ վոր-  
դերին չպետք ե խանգարել. գետնին ընկածնե-  
րին և դես ու դեն թափառողներին պետք ե շա-  
խի վրա բարձրացնել և տեղավորել: Ամենամեծ  
ուշադրութիւն պետք ե դարձնել վորդանոցի  
մաքրութեան և ոգտփոխութեան վրա:

Շախ բարձրանալուց աւենապակասը ? որ  
անցած՝ արդեն բոժոժը պատրաստ ե և վորդն  
սկսում ե պատենավորվել, այսինքն բոժոժը շի-  
նելուց հետո նա կերպարանափոխվում ե հարս-  
նյակի: Պատենավորվելը կարելի յե իմանալ մի  
քանի բոժոժ կտրելով կամ ականջին թափ տա-  
լով. յեթե վորդը մեջը շարժվում ե, նշանակում  
ե, նա արդեն պատենավորված ե:

Այդ շրջանից հետո պետք ե սկսել բոժոժա-  
բաղը: Շախերն զգուշութեամբ քանդելուց հետո,

պետք ե տանել մի մաքուր տեղ և դնել կտավի  
վրա: Նախ շոկում են թրջված ու սևացած բո-  
ժոժները, ապա քաղում են լավերը, չերեսի փա-  
ռերը բաժանում և ածում զամբյուղների մեջ:  
Քաղի վերջը կշռում են, վորպեսզի իմանան, թե  
վորքան արդյունք և տվել բերքը: Ջոկում են  
սրանց միջից զանազան տեսակները, որինակ,  
թոմբալը, չխարը, փամփախը, վորոնց արժեքը  
մշուսներից պակաս ե և հանում շուկա վաճա-  
ռելու:

Յեթե շուտով ծախու չի գնալու և չերկչուղ  
կա թիթեո դուրս գալու, այն ժամանակ պետք  
ե բոժոժը խեղդել:

Բոժոժը խեղդում են արևով, տաք ողով  
կամ շոգիով: Արևով խեղդելու համար բավական  
ե, վոր բոժոժն ութ ժամ շարունակ բարակ շեր-  
տով արևի առաջ փռենք: Արևով և տաք ողով  
խեղդածը թոցնում ե բոժոժի գույնը կամ շատ  
ե չորացնում, քաղը պակասեցնում և կամ կիսա-  
խեղդ թողնում, վորով նորից թիթեո դուրս գա-  
լու յերկչուղ կա:

Ամենից լավ ու գործնական միջոցը շոգիով  
խեղդելն ե: Դրա համար կա մի առանձին մե-  
քենա, վորի մեջ բաց են թողնում 56°—64°  
Ռեմյուրի ջերմութեամբ գոլորշի և 10 բոպեչաչափ  
պահում, վորով ամենահաստ բոժոժի մեջ յեղած

հարսնյակն ել կմեռնի: Հետո մեքենայի պահարանը բաց են անում և խեղդված բոժոժը տանում են մի սովերում կամ քամհար տեղում փրոսմ, վորպեսզի չորանա:

Բոժոժը խեղդված և համարվում այն ժամանակ, յերբ միջի հարսնյակին վորևե բանով ձեռք տալիս չի շարժվում և կամ նկատելի չե, վոր հարսնյակը պոչը կոացրել և դեպի վորը և ողակները կուչ ածել, կնճռոտել:

Մեղդված բոժոժը չորացնելուց յերեք չորս ամիս հետո կորցնում և իր ծանրութեան յերրորդ մասը. և 100 ֆունտ թաց բոժոժը չորանալուց հետո տալիս և 32 - 33 ֆունտ չոր բոժոժ, վորից, յեթե թել քաշելու լինենք, կտանանք 10 ֆունտ թել:

1. Վերև բերած թվերի համաձայն հաշվեցեք, վորքան թել կարելի չե ստանալ 10, 20, 30 փութ թաց բոժոժից, յեթե նրան չորացնենք և թել քաշենք:

2. Ի՞նչ միջոցներով են բոժոժ խեղդում ձեզ մոտ և ի՞նչպես են թել քաշում, նկարագրեցեք և բացատրեցեք նրա առավելությաններն ու պակասությանները:

## 8. ՀՈՐՄՆՅԱԿ ՅԵՎ ԹԻԹԵՆ

Վորզը բոժոժի մեջ փաթաթելուց հետո յեթե յեղանակը հաջող և, 3 4 որ թմրում, քրնում և և մի նոր կերպարանափխության յենթարկվում, վորին ասում ենք պատենավորվել:

Մինչև պատենավորվելը մը վերջով յերկարության ունեցող վորզն այնքան և կուչ գալիս, վոր հազիվ քառորդ յերկարությունն և մնում, գուցն փոխվում և սոդափի գույն և ստանում, վորտքերը և յետեի չեղջուրը թառածում են, 2-3-րդ ողակների կողքերից մարմինն ուռչում և: Այս դրութեամբ քնում և, զարթնելուց հետո մորթը պատում ու գուրս գալիս հարսնյակի կամ պատենավորի կերպարանքով, վոր վոչ մի նմանություն չունի վորզի հետ: Նա ձվածե և, փորին կպած են յերկու թեկների հտքերը, գլխի վրա նկատվում են աչքերը, շոշափուկները, մարմնի վրա՝ ողակների խոր ընկած ծալքերը և շքնառական բծերը: Չկան աչևս վորզի թաթիկները, կնճիթը և պոչիկը: Նա վոչ ուտելու կարողութուն ունի և վոչ շարժվելու:

Սկզբում հարսնյակը շատ փափուկ և, թրջված, կասես քրտինքով ծածկված լինի, գուլյնը

հարսնյակն ել կմեռնի: Հետո մեքենայի պահա-  
րանք բաց են անում և խեղդված բոժոժը տա-  
նում են մի ստվերում կամ քամհար տեղում փը-  
ռում, վորպեսզի չորանա:

Բոժոժը խեղդված ե համարվում այն ժա-  
մանակ, յերբ միջի հարսնյակին վորեւ բանով ձեռք  
տալիս չի շարժվում և կամ նկատելի չե, վոր  
հարսնյակը պոչը կոացրել ե դեպի փորը և ողակ-  
ները կուչ ամել, կնճռոտել:

Սեղդված բոժոժը չորացնելուց յերեք շորս  
ամիս հետո կորցնում ե իր ծանրության չե-  
րորդ մասը, և 100 ֆունտ թաց բոժոժը չորա-  
նալուց հետո տալիս ե 32 - 33 ֆունտ չոր բո-  
ժոժ, վորից, յեթե թել քաշելու լինենք, կստա-  
նանք 10 ֆունտ թել:

1. Վերև բերած թվերի համաձայն հաշվե-  
ցեք, վորքան թել կարելի չե ստանալ 10, 20,  
30 փութ թաց բոժոժից, յեթե նրան չորացնենք  
և թել քաշենք:

2. Ի՞նչ միջոցներով են բոժոժ խեղդում  
ձեզ մոտ և ի՞նչպես են թել քաշում, նկարա-  
գրեցեք և բացատրեցեք նրա առավելություն-  
ներն ու պակասությունները:

## 8. ՀՈՐՄՆՅԱԿ ՅԵՎ ԹԻԹԵՌ

Վորդը բոժոժի մեջ փաթաթելուց հետո յե-  
թե յեղանակը հաջող ե, 3 4 որ թժրում, քը-  
նում ե և մի նոր կերպարանափխության յեն-  
թարկվում, վորին ասում ենք պատենավորվել:

Մինչև պատենավորվելը մը վերջով յերկա-  
րություն ունեցող վորդն այնքան ե կուչ գալիս,  
վոր հազիվ քառորդ յերկարությունն ե մնում,  
գուչն փոխվում և սս դափի գուչն ե ստանում,  
վորտերը և յետևի յեղջուրը թառամում են,  
2 - 3-րդ ողակների կողքերից մարմինն ուռչում ե:  
Այս դրությամբ քնում ե, գարթներուց հետո ժոր-  
թը պատում ու գուրս գալիս հարսնյակի կամ  
պատենավորի կերպարանքով, վոր վոչ մի նմա-  
նություն չունի վորդի հետ: Նա ձվածե ե, փո-  
րին կզած են յերկու թել կների հեռքեր, գլխի  
վրա նկատվում են աչքերը, շոշափուկները, մար-  
նի վրա՝ ողակների խոր ընկած ծալքերը և շըն-  
չառական բծերը: Չկան այլևս վորդի թաթիկնե-  
րը, կնճիթը և պոչիկը: Նա վոչ ուտելու կարո-  
ղություն ունի և վոչ շարժվելու:

Սկզբում հարսնյակը շատ փափուկ ե, թրըջ-  
ված, կասես քրախնքով ծածկված լիսի, գուլնը

բաց դեղնագույն է, բայց մի քանի ժամից հետո մուգ գույն է ստանում և կարծես լակով ծածկըվում: Հաշտնյակն այդ դրու թյաւբ մնում է, մինչև վոր զարգանալով՝ փոխվում է թիթեռի:

Յերբ բոժոժը թողնում ենք առանց խեղդելու, միջի հարսնյակը 15 - 20 որ հետո ձեզքելով իր վերնամաշկը՝ կերպարանափոխվում է թիթեռի: Բերանից յերկու-յերեք կաթիլ պարզ հեղուկ է թափում, թրջում բոժոժի ծայրը, վորից նրա թելերը փափկում են և յետ բացվում, թիթեռը վտաններով յետ է բացանում թելերը, մի փոքրիկ ծակ բանում և դուրս գալիս:

Բոժոժից դուրս գալուց հետո չորացնում է իր խոնավ թևերը նրա մարմինն ամբողջապես ծածկված է սպիտակավուն խավով, զլսի վրա վորոշակի յերևում են աչքերը, գրչաձև շոշափուկները, մեջքին՝ թևերը, իսկ կրծքի տակ՝ յերեք գույգ վտաները:

Թիթեռն ել հարսնյակի պես վոչինչ չի ուտում, միայն յենթադրում են, վոր նա սնվում է իր յուղային մասերով, վոր ամբարել և մարմնի զանազան մասերում: Նա շնչում է արագ, ցուրտը և տաքը դանդաղեցնում են նրա գործարանների աշխատանքները:

Թիթեռն ապրում է ընդհանրապես 12 որ, բայց կարող է պատահել, վոր նա փշանա մի ո-

րում և կարող է պատահել նաև, վոր ապրի 20 - 30 որ:

Թիթեռները դուրս գալուց հետո զուգավորվում են: Նրանցից եզը ձվեր է ածում մինչև 600 հատ: Չու ածելու շրջանը տևում է 2 - 3 որ:

Բեղմնավորված ձվերն սկզբում դեղին են լինում, մի քանի որից հետո դառնում են մուգ կամ խաշխաշի գույնի, իսկ չբեղմնավորվածները մնում են դեղին գույնի և շուտով չորանում են:

Բեղմնավորված ձվիկները հավաքում են փոքրիկ քուակների մեջ և պահում հով և չոր տեղ, հետեյալ տարին նրանցից նոր վորդեր առաջ բերելու համար:

## 9. ՇԵՐԱՄԻ ՎՈՐԴԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Շերամի վորդը յենթարկվում է տեսակ-տեսակ հիվանդությունների, վորոնց վրա դիտնականները մեծ ուշադրություն են դարձրել և աշտատել են գտնել նրանց պատճառներն ու նրանց դեմ կռվելու միջոցները: Այդ դիտնականներից ամենաառաջինն ու ամենանշանավորը Պաստյորն է:

Շերամի վորդի հիվանդություններից զը-

խախտներն են՝ քարքալ, բծավոր ախտ, դեղնացալ, փայլուցք և ջրով անցնելը:

Այս բոլոր հիվանդութիւններն ել առաջ են գալիս զանազան մանրագիտակային եակների պատճառով, վորոնք Պաստյորի ասելով, բնակ վելով վորդի ստամոքսի մեջ և այլ տեղ՝ տարածվում են մարմնի զանազան մասերը և նրբան վոչնչացնում: Այդ ախտերից շատերը վարակիչ են և ժառանգական, ուստի պետք է մեծ զգուշութիւն բանեցնել նրանցից ազատ մնալու համար:

Դեղնացալը սովորաբար պատահում է վորդի հինգերորդ շրջանում: Այս հիվանդութիւնով բռնված վորդը հազիվ է պատահում, վոր բոժոժ շինի կամ թիթեռ գտնա: Դեղնացալի նշաններն են նրա չափից ավելի հաստանալը և ուռչելը: Այս հիվանդութիւնն գեմ կովելու միակ միջոցներն են՝ ողափոխութիւնը, ջերմութիւնը և խոնավութիւնն առաջն առնելը:

Ջրով անցնելն ամենակատարի և վրասակար հիվանդութիւնն է: Նրա նշաններն են՝ վորդը չորրորդ քնից հետո վոչինչ չի ուտում կամ քիչ է ուտում, քաշվում է փոսցի կողբերը, ձգվում է անշարժ և իրենից արձակում է մի ջրալի սև հյութ, վորը ծածկում է նրա հետույքը: Քիչ անցած հարյուրավոր գիակներ թափվում են ցած:

մի որ չանցած՝ բոլորովին սեանում են, նեխվում և դարձահոտութիւնն տարածում շուրջը:

Այս հիվանդութիւնը վերին աստիճանի վարակիչ է: Յեթե մեռածներին դնենք առողջների հետ, շուտով նրանք ել նույն հիվանդութիւնը կունենան: Այս հիվանդութիւնն գեմն առնելու միջոց չէ գտնված, բայց իբրև նախազգուշութիւն պետք է ուշադրութիւն դարձնել սերմի առողջութիւն վրա, վորդերի տեղն ընդարձակել, կերակուրն ընտրել և կանոնավոր բաժանել, աղբը շուտ շուտ հեռացնել և այլն, մի խոսքով կանոնավոր խնամատարութիւն անել:

Վորդի թշնամիները.— Ինչպես ամեն կենդանի, այնպես ել շերամի վորդն ունի իր թշնամիները: Որինակ, մկները կրծում, ուտում են թե վորդերին, թե սերմը և թե բոժոժը: Մրջյուններն ավելի կատարի թշնամի չեն, քան թե մկները: նրանք հարձակվում են վորդերի վրա՝ սկսած առաջին շրջանից մինչև վերջին շրջանը, կծոտում, վիրավորում են նրանց և քաշում, տանում: Սրբանց գեմն առնելու համար պետք է սև նավթի մեջ թաթախել մի կտոր բուրդ և փակել այն տեղերը, վորտեղով նրանք անցնում են: Նավթի հոտից նրանք փախչում են: Մյուս թշնամիներն են բնտանի և վայրենի թռչունները, վորոնք յեթե մեկ անգամ վորդերին սովորեցին, այլ ևս



ձեռք չին քաշում: Վերջապես սարգերն ու ոձև-  
րը նույնպես պակաս թշնամիներ չեն, փորդա-  
պահը պետք է շատ զգուշ լինի նրանցից:

### 10. ՄԵՏԱԲՈՒ ԹԵԼԸ ՅԵՎ ԳՈՐԾՎԱԾԲՆԵՐ

Թել ստանալու համար բոժոժը դնում են  
տաք ջրի մեջ և ճիպտաներով ձեծում: Տարու-  
թյան ազդեցությամբ տակ թելերը միմյանց միաց-  
նող սոսնձանյութը հալվում և հեռանում է, թե-  
լերի ծայրերը բացվում են և կպչում ճիպտանե-  
րին: Մետաքսի թելի յերկարությունը կլինի մո-  
տավորապես 1000 մետր. նա շատ բարակ է,  
բայց շատ ամուր: Մի բանի թելերի ծայրերն  
իրար հետ միացնելով՝ վոլորում են և փաթա-  
թում ճիպտաներին: Այնուհետև նրանցից մանում  
են զանազան հաստության թելեր: Շատ հին ժա-  
մանակվանից մետաքսաթելը գործ է անվել ա-  
մենաթանկագին և շքեղ գործվածքների համար:  
Մետաքսի գործվածքներից հայտնի յեն՝ տափտա,  
ֆուլյար, չե-սու-չա և այլն:

### 11. ՄԵՏԱԲՈՒԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Մետաքսի փորդ պահելը և մետաքսի ար-  
տագրությունն առաջ է յեկել Չինաստանում,  
մեր դարաշրջանից 4 հազար տարի առաջ: Սրա-

նից 1200 տարի առաջ արաբների միջոցով մուտք  
գործեց Յեվրոպա՝ Սպանիա, աֆրիկայից Իտալիա  
և Ֆրանսիա: Իսկ 1714 թ. մուտք գործեց Ռու-  
սաստան:

Ներկայումս մետաքսագործության առաջ-  
նակարգ տեղերն են Ասիայում՝ Չինաստանն ու  
Յապոնիան, իսկ Յեվրոպայում՝ Ֆրանսիան և  
Իտալիան. Մերձ-Արևելքում՝ Պարսկաստանը, Տաճ-  
կաստանը, Անդրկովկասը՝ Նուխիի և Շուշվա գա-  
վառները:

Անդրկովկասյան հանրապետություններից մե-  
տաքսագործության առաջին տեղը համարվում  
է Ադրբեջանը, նրանից հետո՝ Արաստանը և յեր-  
րորդ տեղը՝ Հայաստանը:



**ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՂ

1. Սերմը բոց անելու ժամանակը	3
2. Վորդը կամ թրթուռը . . . . .	5
3. Բոժոժ շինելը . . . . .	8
4. Վորդերի խնամքը . . . . .	10
5. Վորդանոց կամ շերամատուն . . . . .	13
6. Թթենին և նրա տերերը . . . . .	16
7. Շախ դնելը և բոժոժաբաղը . . . . .	19
8. Հարսնյակ և թիթեռ . . . . .	23
9. Շերամի հիվանդություններն ու թշնամիները . . . . .	25
10. Մեաաքսի թեյը և գործվածք՝ եր . . . . .	28
11. Մեաաքսագործության շրջանները . . . . .	28

---

021

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Գրքի անունը  
 2. Գրքի հեղինակը  
 3. Գրքի թիվը  
 4. Գրքի լեզուն  
 5. Գրքի տեսակը  
 6. Գրքի հատման թիվը  
 7. Գրքի հատման տարեթիվը  
 8. Գրքի հատման վայրը  
 9. Գրքի հատման մեթոդը  
 10. Գրքի հատման արդյունքը  
 11. Գրքի հատման նշանակությունը

« Ազգային գրադարան



NL0286910

ԼՈՒՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆԵՐՑ

	Գինը
1. Տերևաթափ և աշնան գուլներ . . .	10 կ.
3. Թռչունների չուն . . . . .	10 »
4. Պտուղներ և սերմեր . . . . .	10 »
8. Ինչ վոր կը ցանես, այն ել կը հնձես . . .	10 »
11. Բամբակ . . . . .	10 »
12. Տորֆ, քարածուխ և նավթ . . .	10 »
16. Մեղու . . . . .	15 »
20. Հանքեր . . . . .	15 »

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ

2. Կենդ. հարմարացումը և ձմեռալին քունը . . . . .	
5. Հող և նրա մշակումը . . . . .	
6. Բանջարանոց . . . . .	
7. Այգի . . . . .	
9. Մարգագետին . . . . .	
10. Ուղ և ջուր . . . . .	
13. Կովի կերը և խնամքը . . . . .	
14. Կաթնամթերքներ . . . . .	
15. Ընտանի թռչունների խնամքը . . .	
17. Գյուղատնտ. մեքենաներ և զործիք- ներ . . . . .	
18. Ակվարիում և տիրրարիում . . .	
19. Ինչպես կազմել հերբարիում . . .	
22. Անտառ . . . . .	